

N 22-35  
01.06.2022

ՀՀ արդարադատության նախարար  
պարոն Կարեն Անդրեասյանին.


### ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ ֆրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտարդներին խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնագրույց են ունեցել կալանավորված անձ Կարեն Հովհաննիսյանի հետ: Խմբի անդամներին վերջինս հայտնել է, որ դիմել է ինֆնասպանության փորձի (որը կանխվել է) ֆանի որ իր առողջական վիճակին պատշաճ ուշադրություն չի դարձվում: Ըստ նրա, անհրաժեշտ է իրականացնել ԿՎԴ իմպլանտացիա, սակայն բժիշկները թույլ չեն տալիս, ինքը ծայրահեղ վիճակում է՝ թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես, տեղափոխվում է սայլակով, գտնվում է Արմավիր ՔԿՀ բուժմասում: Ընդունում է մեծ ֆանակությամբ դեղորայք, ներարկումներ՝ բարձր ճնշման դեմ, երակներն արդեն չեն դիմանում այդ ներարկումներին (բազուկները կապտած էին): Կարեն Հովհաննիսյանը հայտնել է նաև, որ իրեն պետք է ԿՎԴ իմպլանտացիա անեն, և կա բանավոր պայմանավորվածություն մասնավոր բժշկական կենտրոնի հետ, սակայն Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ը չի տալիս իր համաձայնությունը: Կ.Հովհաննիսյանը գտնում էր, որ իր հիվանդությունները խոչընդոտում են կալանքը կրելուն և ցանկանում էր, որ Բժշկական հանձնաժողովը ֆինանսական առարկա դարձնի հիշյալ հարցը:

Խնդիրը ֆինանսավել է նաև Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարի հետ, նա ևս գտնում էր, որ Կարեն Հովհաննիսյանի վիճակը ծանր է, սակայն լրջագույն հետազոտություններ իրականացնելու համար նրան նույնիսկ դժվար է տեղափոխել: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխելը կալանավորված անձը համարում է անարդյունավետ, ֆանի որ 2,5 տարի այնտեղ բուժում է ստացել, սակայն առողջական վիճակը շարունակել է վատթարանալ: ՊՈԱԿ «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարի հավաստմամբ, Կարեն Հովհաննիսյանը գտնվում է ստորաբաժանման անձնակազմի խիստ դինամիկ հսկողության տակ, արձանագրվում է ամենօրյա զարկերակային ճնշումը և արձանագրվում է բարձր ցուցանիշներով ստատանում, անձը ստանում է դեղորայքային բուժում:

20.05.2022թ.-ին ինֆնասպանության փորձի կապակցությամբ զննվել է հոգեբույժի կողմից, որն արձանագրել է հոգեպես առողջ վիճակ: Ինչ վերաբերում է ԿՎԴ իմպլանտացիային, ապա վերջին հետազոտության համաձայն, որը կատարվել է 07.04.2022թ.-ին Կարեն Հովհաննիսյանը տեղափոխվել է Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության կլինիկա՝ 24 ժամյա Հուլտեր մոնիթորինգի նպատակով, որի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐԱՊՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԵՐԻ ԽՈՒՄԲ

արդյունքում իրականացվել է Հոլտեր հետազոտություն և նյարդաբանի ու սրտաբանի խորհրդատվություններ: Նշանակվել է դեղորայքային բուժում:

ՀՀ ԱՆ ՔԲԿ ՊՈԱԿ հետազոտությունների և մոնիթորինգի արդյունքների հիման վրա որոշում է կայացվել կալանավորված անձին տեղափոխել Նորք-Մարաշ սրտաբանական կլինիկա՝ դեֆիբրիլյատորի տեղադրման հիմնավորումը կայացնելու և տեղադրելու համար: Եզրակացության համաձայն խորհուրդ է տրվել սահմանել առողջական վիճակի հսկողություն, նշանակվել է դեղորայքային բուժում, նշվել է, որ հիվանդը ԿՎԴ իմպլանտացիայի ցուցում չունի:

ՊՈԱԿ «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարը նաև նշել է, որ Աստղիկ ԲԿ-ի բժիշկները Արմավիր ՔԿՀ-ում իրականացվելիք հետազոտությունների շրջանակում պարտադիր ընդունելու են նաև Կարեն Հովհաննիսյանին:

Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի ղեկավար Կամո Մանուկյանի՝ Կարեն Հովհաննիսյանի կնոջն ուղղված 06.05.2022թ. Թիվ Ե-1236 գրության մեջ նշված է, որ 07.04.2022թ.-ին Կարեն Հովհաննիսյանը տեղափոխվել է Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության կլինիկա և հիշյալ բժշկական կենտրոնի կողմից 08.04.2022թ.-ին տրված թիվ 1183 Հ/Պ տեղեկանքով Կ.Հովհաննիսյանին նշանակվել է դեղորայքային բուժում: Նույն թվով /1183 Հ/Պ/ մեկ այլ տեղեկանքով Կարեն Հովհաննիսյանին բացի դեղորայքային բուժումից խորհուրդ է տրվել նաև ԿՎԴ իմպլանտացիա: 20.04.2022թ. Կ.Հովհաննիսյանը ԿՎԴ իմպլանտացիայի նպատակով 20.04.2022թ. տեղափոխվել է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն, որտեղ խորհուրդ է տրվել առողջական վիճակի հսկողություն, դեղորայքային բուժում և նշվել է, որ հիվանդը չունի ԿՎԴ իմպլանտացիայի ցուցում: Միաժամանակ նշվել է, որ Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ը համապատասխան մասնագետների հետ կհենարկի Կարեն Հովհաննիսյանի հետագա բուժման անհրաժեշտությունն ու ռազմավարությունը /գրությունը՝ կից/:

Վերոգրյալի հիման վրա արձանագրում ենք, որ Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկվել են որոշ ջանքեր Կարեն Հովհաննիսյանի առողջական վիճակի ուսումնասիրության և բուժման նպատակով, միևնույն ժամանակ նաև արձանագրում ենք, որ գործադրված ջանքերը չեն տվել ցանկալի արդյունք, քանի որ կալանավորված անձի առողջական վիճակը գնալով վատթարանում է (Խումբը նշված անձի առողջական վիճակի վերաբերյալ նախկինում նույնպես ներկայացրել է իր մտահոգությունները):

Նշվածի կապակցությանն առաջարկում ենք՝

- Հետամուտ լինել, որպեսզի Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի և համապատասխան մասնագետների հետ հենարկվի Կարեն Հովհաննիսյանի հետագա բուժման անհրաժեշտությունն ու ռազմավարությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

- Քննարկել Կարեն Հովհաննիսյանի հիվանդությունների՝ կալանքը կրելու խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին համապատասխանությունը իրենց համակցությամբ՝ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի N 825-Ն որոշման:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան